№ 190 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 1899 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 № 190

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Անյետաձգելի պահանջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դահլիճից. Ե. Այվազովսկու հռչակաւոր նկարները. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀՌԱՓԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆՅԵՏԱՁԳԵԼԻ ՊԱՀԱՆՋ

Մեր ժողովրդի, մանաւանդ գիւղական ազգաբնակութեան կեանքը մօտիկից ուսումնասիրողները չեն կարող ուշադրութիւն չը դարձնել մի կարևոր հանգամանքի և ինքն ըստ ինքեան տխուր երևոյթի վրա: Զը նայելով, որ մօտ կէս դար է, ինչ գոյութիւն ունի մեր այժմեան աշխարհիկ գրականութիւնը, չը նայելով որ վերջին քսան տարվայ ընթացքում հրատարակվել են բաւական մեծ թւով ժողովրդական գրքեր, չը նայելով, որ հաղորդակցութեան միջոցները այժմ անհամեմատ աւելի հեշտ են, քան առաջ, այնու ամենայնիւ հայ խօսակցական լեզուն գաւառներում և մանաւանդ գիւղերում մնում է գրեթէ այն, ինչ-որ էր 40—50 տարի առաջ, չէ մշակվում և արարատեան մաքուր աշխարհաբարը չէ տարածվում ու ընդհանուր խօսակցական լեզու չէ դառնում: Ի՞նչ է այս տխուր երևոյթի պատճառը. արդեօք այն, որ հայ լրագիրները, հայ գրքերը չեն տարածվում ժողովրդի մէջ, թէ այն՝ որ ժողովուրդը, մասսան, ինչպէս շատերն են ենթադրում, իբրև պահպանողական տարր, ձգտումն չէ ցոյց տալիս մշակել իր լեզուն, յարմարեցնել իր առօրեայ խօսակցութիւնը այն ընդհանուր լեզուին, որով գրվում են լրագիրները և գրքերը:

Տարակոյս չը կայ, որ վերջին քսան և հինգ տարվայ ընթացքում, մեր աշխարհիկ գրական լեզուն ոչ միայն զարգացել է, տարածվել, այլ և ազդեցութիւն է գործել խօսակցական լեզուի մշակման վրա: Բայց այդ ազդեցութիւնը նկատելի և շօշափելի է միայն գլխաւոր քաղաքներում և կենտրոնական տեղերում. խուլ անկիւնները, գիւղերը անմասն են մնում այդ բարերար ազդեցութիւնից և անմասն են մնում, որովհետև լրագիրը և գիրքը մուտք չեն գործում այդտեղ: Վիճակագրութիւնը շատ տխուր փաստեր է դնում մեր առաջ. հայերի մէջ ամենից շատ տարածված, ժողովրդական «Մշակը» հազիւ 2500 բաժանորդ ունի. ամենից շատ գրքեր հրատարակող Հրատարակչական ընկերութիւնը հազիւ տարեկան 10—20 օրինակ գիրք է հրատարակում, իսկ չէ՞ որ Ռուսաստանում մօտ մի միլիոն հայ ազգաբնակութիւն կայ: Ժողովրդի մեծամասնութիւնը և գլխաւորապէս գիւղական ազգաբնակութիւնը լրագիր, գրքի երես չէ տեսնում, այդ պատճառով և նրա լեզուն չէ մշակվում, գրական աշխարհիկ լեզուն չէ տարածվում նրա մէջ: Ի հարկէ, գործին քիչ չէ վնասում և այն հանգամանքը, որ մեր այժմեան աշխարհաբարը, որով գրվում են մեր լրագիրները և գրքերը միատեսակ, մշակված, արդէն կազմակերպված լեզու չէ ներկայացնում, բայց, անկասկած, գլխաւոր պատճառը, որ մեր ժողովրդի խօսակցական լեզուն չէ մշակվում, չէ մաքրվում աղաւաղութիւններից, խորթութիւններից և մեր մէջ չէ տարածվում, հաստատվում մի ընդհանուր գրական—խօսակցական լեզու, այն է, որ մեր գիւղական ազգաբնակութեան, ժողովրդական մասսայի մէջ չէ տարածվում ոչ լրագիր, ոչ գիրք:

Արդ, ի՞նչ անել, ինչ միջոցի դիմել, որ ժողովուրդն ընտելանայ, ընթերցանութեան ձգտումն և սէր ցոյց տայ դէպի գիրքը, դէպի լրագիրը և դրանով ևս հետզհետէ մշակի իր խօսակցական լեզուն ու մօտեցնէ նրան ընդհանուր աշխարհիկ գրական լեզուին: Միջոցներ շատ կան, ի հարկէ, բայց ոչ ամեն մի միջոց արագ գործադրելի է: Ամենայարմար միջոցներից մէկն էլ այն է, որ մեզանից աւելի քաղաքակիրթ ազգերը գործադրել և գործադրում են: Անգլիայի պատմութիւնը ցոյց է տալիս, որ այժմեան գրական անգլիական լեզուն ընդհանրացնողը, տարածողը, ժողովրդականացնողն եղել է սուրբ գրքի թարգմանութիւնը մաքուր խօսակցական կամ աշխարհաբար լեզուով: Ժողովուրդը, մանաւանդ կրօնասէր ժողովուրդը, որպիսին հանդիսանում է և հայոց ազգը, մեծ սիրով լսում է աստուածաշնչի և աւետարանի ընթերցումն և ոչ մի մատեան այնքան յարգի չէ գիւղում, ինչքան սուրբ գիրքը: Արդ, մեզ մօտ ևս ամենայարմար և արագ միջոցներիցը մէկը՝ մաքրելու մեր խօսակցական լեզուն, ընդհանրացնելու մեր այժմեան աշխարհաբար գրական լեզուն, ժողովրդականացնելու նրան, կը լինի սուրբ գիրքը մաքուր, միատեսակ, պարզ արարատեան աշխարհաբար—գրական լեզուով տարածել նրա մէջ:

Այս առաջին անգամը չէ, որ «Մշակը» խօսում է աւետարանի ժողովրդական թարգմանութեան անհրաժեշտութեան մասին: Այսօր մենք կրկնում ենք այն, ինչ-որ շատ անգամ քարոզել ենք, ապացուցել ենք: Եթէ էջմիածինը չը կարողացաւ մինչև այսօր գոհացումն տալ այդ անյետաձգելի պահանջին, ժամանակ է, որ ինքն հայոց հասարակութիւնը մտածէ այդ մասին և իրագործէ վաղուց արծարծված միտքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

I

Հոկտեմբերի 8-ին, Բագուի նահանգական դատարանի քաղաքացիական բաժնում, նախագահի օգնական Տուտէվիչի նախագահութեամբ, քննվեց Շամախու հայ լուսաւորչական կոնսիստորիայի սկսած դատը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան դէմ, ի դէմս Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, Շամախի քաղաքում գտնված սեփականութեան իրաւունքի մասին: Կոնսիստորիայի շահերը պաշտպանում էր փաստաբան Ս. Յարութիւնեան, իսկ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի ներկայացուցիչն էր Բագուի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Տիսօրժէվսկի:

Կոնսիստորիայի հաւատարմատարի տուած պահանջական խնդրագրից երևում է, որ 1898 թւի յուլիսի 14-ին, Շամախու քաղաքային դպրոցի տեսուչ Մամալաձէ, հիմնվելով վերատեսչի հրամանագրի վրա, համաձայն կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի առաջարկութեան, հանել է Շամախու հայոց կոնսիստորիայի տիրապետութիւնից Շամախու ս. Աստուածածնի եկեղեցուն պատկանող երկյարկանի քարաշէն տունը և ընդունել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան վարչութեան ներքոյ: Այդ կարգադրութիւնը հիմնվում է մինիստրների կոմիտէի 1898 թւի մարտի 26-ին կայացած որոշման վրա, որի զօրութեամբ ուսումնարանական վարչութեան հրամանագրված է դրաւել հայոց եկեղեցական դպրոցների բոլոր անշարժ կալուածները:

Կովկասի ուսումնարանական իշխանութիւնը, ի նկատի ունենալով, որ վերոյիշեալ տունը պատկանում էր Շամախու հայոց եկեղեցական ծխական նախկին դպրոցին, մինիստրների կոմիտէի որոշման ենթարկեց և այդ կալուածքը: Սակայն, ինչպէս երևում է պահանջական խնդրագրից, յիշեալ կալուածքը երբէք Շամախու դպրոցին պատկանելիս չէ եղել, այլ Շամախու հայոց ս. Աստուածածնի եկեղեցու սեփականութիւնն է եղել և վէճի ենթակայ այդ տունը չինված է Ներսէս V-դ կաթողիկոսի հրամանով և Շամախու վիճաբանական նահանգապետից 1855 թ. հաստատված մակարդակով: Շինութիւնից յետոյ, որ աւարտվեց 1857 թւին, այդ տունը մինչև գրաւման օրը գտնվում էր հայ-լուսաւորչական Եկեղեցական վարչութեան տիրապետութեան և կարգադրութեան ներքոյ, և նրա մէջ զետեղվում էին՝ կոնսիստորիան իր արխիվով, անդամները, թեմական առաջնորդները և ուրիշ հոգևորական անձինք: Որոշելով պահանջի գինը 7 հազար ռուբլի, և հիմնվելով Ներսէս V-դ կաթողիկոսի երկու կոնդակների, էջմիածնի սինոդի հրամանագրերի և ուրիշ դոկումենտների վրա, կոնսիստորիայի հաւատարմատարը խնդրեց ճանաչել այդ տունը սեփականութիւն Շամախու հայոց ս. Աստուածածին եկեղեցու, և հանել ուսումնարանական վարչութեան ապօրէն տիրապետութիւնից, նորից յանձնելով հայոց կոնսիստորիայի տիրապետութեան:

Ուսումնարանական վարչութեան լիազօրի ներկայացրած գրաւոր պատասխանի մէջ, պ. Տիսօրժեվսկի յայտնեց, որ ներկայ գործը չէ կարող ենթակայ լինել նահանգական դատարանի քննութեան, որովհետև ներկայ դէպքում վէճ է սկսված երկու արքունի հաստատութիւնների, այն է ներքին գործերի մինիստրութեան (որին ենթարկվում է հայոց կոնսիստորիան) և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ. իսկ այդ դէպքում, օրէնքի 1297 յօդ. հիման վրա, վէճը պէտք է քննվի երկու մինիստրութիւնների մէջ և, եթէ համաձայնութիւն չը կայանայ, պէտք է անցնի կառավարիչ սենատի քննութեան:

Ներկայ նիստում կոնսիստորիայի հաւատարմատարը յայտնեց, որ Տիսօրժեվսկու պատասխանն անկանոն է, որովհետև 1297 յօդուածը, որի վրա հիմնվում է ուսումնարանական վարչութիւնը, ի նկատի ունի այն կալուածական վէճերը, որոնք պատկանում են զանձարանին և կազմում են պետական սեփականութիւն: Ներկայ գործում վէճը ծագել է մի կալուածքի մասին, որ հայոց եկեղեցու սեփականութիւն է, իսկ ռուսաց հիմնական օրէնքներով այդ եկեղեցին ամեն տեսակ անշարժ կալուածքներ ունենալու անկախ իրաւունք ունի: Այդ տեսակ կալուածքների վերաբերմամբ կայ XI հատորի 1221-դ յօդուածը, որի զօրութեամբ այդ վէճերը վճռվում են ընդհանուր դատաստանական տեղերում: Վերջապէս 1898 թւի մարտի 26-ին կայացած մինիստրների կոմիտէի որոշման II կէտը հրամայում է՝ բոլոր քաղաքացիական վէճերը հայոց եկեղեցական դպրոցների կալուածքների վերաբերմամբ լուծել ընդհանուր դատաստանական կարգով: Մինիստրների այդ որոշումը հաստատված է Թագաւոր Կայսրից և ուրեմն, քանի որ կայ առանձին օրէնք այդ գործի մասին, հարկ չը կայ ղեկավարվել ընդհանուր օրէնսգիրքի կանոններով: Այդ հիման վրա փաստաբան Յարութիւնեան խնդրեց՝ չը յարգել ուսումնարանական վարչութեան պատասխանը:

Առարկելով կոնսիստորիայի հաւատարմատարին, պ. Տիսօրժեվսկի պնդեց իր ասածի վրա, թէ ներկայ գործը ենթակայ չէ նահանգական դատարանին և ցոյց տուեց, թէ փաստաբան Յարութիւնեան մատնացոյց է լինում 1898 թւի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատված մինիստրների որոշման II կէտի վրա ոչ բոլորովին կանոնաւոր կերպով, որովհետև այդ կէտում ասված է, թէ հայոց դպրոցներին պատկանող կալուածքների մասին ծագած վէճերը պէտք է քննվեն ոչ թէ ընդհանուր դատաստանական կարգով, այլ ընդհանուր ընդունված կարգով. իսկ ընդհանուր ընդունված կարգն այն է, որի վրա մատնացոյց է լինում ինքը, այսինքն երկու մինիստրութիւնների համաձայնութեան միջոցով:

Պրոկուրորի օգնականը իր եզրափակման մէջ յայտնեց, որ պէտք է յայտնել ուսումնարանական վարչութեան պատասխանը:

Նահանգական դատարանը, կէս ժամ խորհրդակցելուց յետոյ, յայտնեց իր վճիռը, որով անհետևանք է թողնում ուսումնարանական վարչութեան պատասխանը, իրաւունք տալով բողոքել այդ վճռի դէմ դատաստանական պալատին երկու շաբաթվայ ընթացքում:

II

(Շարունակութիւն)

Պրոկուրորի օգնական Բելեավսկի: 1895 թւին Թիւրքիայում տեղի ունեցաւ մի պատմական դրամա—հայերի բարբարոսական կոտորածը: Այդ դրամայի մի վայրկեանը, ճակատագրի կամքով, կատարվեց Սիմֆերոպոլում: Սիմֆերոպոլում սպանվեց Թիւրք Հասանը հայ Գրիգորի ձեռքով այն պատճառով, որ Հասանը մորթել էր Բաբերդում Գրիգորի հօրը և երկու եղբայրներին: Գրիգորին, ի հարկէ, ուրիշ բան չէր մնում անելու, եթէ ոչ փախչել Ռուսաստան, ազատվելով Թիւրքերի հալածանքից: Բոլորովին անօգուտ կը լինէր նրա կողմից յայտնել Սիմֆերոպոլում իշխանութեան, թէ Թիւրքիայում Հասանը կոտորել է նրա ընտանիքը, որովհետև ոճիրը կատարված է ոչ Ռուսաստանում: Ապա պրոկուրորը ասում է, թէ ինչպէս Գրիգորի մէջ եռաց վրէժխնդրութեան ոգին, երբ հանդիպեց Հասանին և նա վճռեց սպանել նրան: Ահա այդ դրդիչ պատճառը—սպանութիւն վրէժխնդրութեան համար—պէտք է հաստատել այս դատարանում: Վկաների ցուցմունքներով հաստատվեց, որ մեղադրվողի պատմութիւնը այն բանի մասին, թէ Հասանը կոտորել է նրա ընտանիքը՝ ոչ մի կասկածի տեղիք չէ տալիս: Գրիգորը ոչ մի օրինական ճանապարհ չունէր պատժել իր ընտանիքի դահիճին: Բայց—ասում է պրոկուրորը—մեր գործը չէ, թէ ինչ է կատարվում Թիւրքիայում: Մեր երկրում, որ կառավարվում է օրէնքով, սպանութիւնը թոյլատրվում է միայն այն ժամանակ, երբ մարդուն անմիջական վտանգ է սպառնում և նա ստիպված է պաշտպանվել: Գրիգորն այդպիսի վիճակի մէջ չէր գտնվում, ուստի նա պատասխանատու է իր արարքի համար և ես, իբրև պետական մեղադրութեան ներկայացուցիչ, պահանջում եմ նրա դատապարտութիւնը:

Պաշտպանը, երդուեալ հաւատարմատար Կարաբէչէվսկի: Եթէ մենք կամենայինք այս գործի մէջ սահմանափակել դատաստանական քննութիւնը և նոյն իսկ մեր աշխարհայեացքը բացառապէս այն նիւթերով, որոնք պարունակվում են մեղադրվողի և Բաբերդի կոտորածի երկու-երեք ականատեսների պատմութեան մէջ, մենք մի տարօրինակ դրութեան մէջ կընկնենք: Մեզ այնպէս կը թւար, թէ մենք ենթարկված ենք մի ծանր կշռարի, թէ մենք վատ երազ ենք տեսել կամ թէ մեզ, իբրև երեխաների, վախեցրել են մի զարհուրելի պատմութիւն անելով: Ոչ թէ անցեալ դարերի արիւնալի խորքերում, այլ մեզանից ոչ հեռու, Օսմանեան հողի վրա, միայն 3½ տարի առաջ, հայաբնակ քաղաքային թաղերի խաղաղ բնակիչների մէջ, անարդել և անպատիժ կերպով թափառում են զինաւորված մարդկանց աւազակային հրոսակներ—Թիւրքեր: Նրանք կողոպտում են և կենդանի մարդկանց դիակ են դարձնում: Ոչ ոք չէ կարող իրան հաշիւ տալ, թէ ինչ է կատարվում: Քաղաքում կայ զօրք, կան ոստիկաններ, բայց նրանք առաջ անգործ են մնում, իսկ յետոյ խառնվում են աւազակային հրոսակների հետ և «հանգստացնում են» իրանց սեփական հարուածներով այն հայերին, որոնք փորձում էին փախչել: Ամբողջ օրը տեղի է ունենում կոտորածը: Զինաւորված Թիւրքերի առանձին հրոսակներ, Բաբերդ քաղաքի և նրա գաւառի նշանաւոր պաշտօնեաների կամ անձանց առաջնորդութեամբ, տակն ու վրա են անում ամեն մի հայի տուն, կողոպտում են ինչ որ թանգագին բան կայ և լցնում են իրանց դրպանները, թողնելով ամբոխին յափշտակել մնացածը: Տների մէջ թաղնված հայերին անգթաբար հանում են իրանց թաքստեան տեղից, քաշ են տալիս փողոցներով և սպանում են սարսափահար կանանց և երեխաների առաջ: Այդպիսի կատաղի հրոսակների մէկի գլխաւորն էր Միմի օղլի Հասանը, որը

սպանվեց Սիմֆերոպոլում 1898 թուի ապրիլի 29-ին, հայ Գրիգոր Գուգուլեանի խանչալի հարուածով: Կոտորածից փախած հայերի ասելով, այդ Հասանը «մորթոտել է» շատ հայերի, որոնց թուում մի քանի շատ հարուստ ընտանիքներ և յափշտակել է նրանց փողերը: Ուրիշ խաղաղ հայերի թուում, նա իր սեփական ձեռքով մորթել է Մանուկ Գուգուլեանին՝ մեղադրվողի ծերունի հօրը, և նրա երկու եղբայրներին, Սարգսին ու Խաչատուրին: Ինքը, Գրիգոր Գուգուլեանը, ազատվել է մի տեսակ հրաշքով: Մինչև կոտորածը Գուգուլեանները ապրում էին ամենքը միատեղ, իրանց սեփական տան մէջ, պարապում էին արհեստներով և ունևոր մարդիկ էին: Կոտորածից յետոյ մնացին՝ Գրիգորի մայրը—Սրբուհին, չորս աղջկանց հետ, 20, 18, 14 և 8 տարեկան. նրանք մուրացկան դարձան: Կոտորածը տևեց ամբողջ օրը մինչև մութը ընկնելը. չէին խնայում և կանանց, որոնք փորձում էին պաշտպանել իրանց ամուսիններին: Կոտորածից ազատված բաբերդցի հայերին տեղական իշխանութիւնը իսկոյն բանտարկեց «անկարգութիւնների» համար և նրանք բանտում նստեցին մի քանի ամիս: Երբ մութը կոխեց և արիւնով ու աւարառութեամբ յղփացած թիւրքերը քաշվեցին հայ թաղերից իրանց տները, կամ սրճարանները՝ անձնատուր լինելու էֆֆի, Բաբերդի ամայի փողոցները թնդացին ողբերով և հառաչանքներով, որոնց մինչև այդ ժամանակ զսպել էր երկիւղը: Դրանք հայ կանայքն էին, որոնք գցելով իրանց գլխին սև չարշաւներ, իբրև սգի նշան, դուրս էին եկել իրանց աւերված խրճիթներից՝ թանկագին դիակները որոնելու համար: Այդ դիակները թափված էին փողոցներում. փողոցային շունը լիզում էր քարերից մարդկային արիւնը, իսկ կանայք, վառված լուցկու պլպլող լոյսով, ճանաչում էին ամեն մէկը իրանց «հանգուցեալներին»: Այդտեղ, ինչպէս պատմում է Բաբերդից Ռուսաստան փախած Նազելի Մինասեանը, կանայք հաղորդում էին միմեանց տխուր լուրերը: Մինասեանը պատմեց իր դրացուհի Սրբուհի Գուգուլեանին, թէ իր՝ Մինասեանի ազգական աղամարդկանց սպանել է Իսմայիլ աղայի հրոսակը: Իսկ Սրբուհին պատմեց, որ իր ամուսին Մանուկին և Սարգիս ու Խաչատուր տղաներին սպանել է Միմի օղլի Հասանի հրոսակային խումբը: Ուրեմն Գուգուլեան պառաւի ցուցմունքը բոլորովին համաձայն է այն ամենի հետ, ինչ-որ տեսել և լսել է կոտորածի օրը թիւրքերից թաղնված Գրիգոր Գուգուլեանը: Այո, միթէ այս բոլորը հերիաթի տպաւորութիւն չէ թողնում: Դատարանը իրաւունք չը տուեց ինձ ժամանցոյց անել այն յատուկ պատմական շարադրութիւնների վրա, որոնք վերաբերում են Թիւրքիայում 1894—1896 թուերին կատարված կոտորածներին: Ես ստիպված եմ հնազանդվել դատարանի այդպիսի կարգադրութեան, թէև, թող ներվի ինձ ասել, ամենևին չեմ կարող հասկանալ, թէ ինչպէս կարելի է այդ եղանակով հասնել «դատաստանական պրէսպէկտիվը չը յեղաշրջելու» նպատակին: Երբ մեր մէջ մտցրվեց հրապարակական դատավարութիւնը, մենք, ի հարկէ, ցնծում էինք ոչ թէ այն պատճառով, որ քրէական պատիժը պէտք է սաստկանայ, այլ այն պատճառով, որ այդպիսի պայմանների մէջ դատարանը կարող կը լինի լուսաբանել ճշմարիտ, արդարադատ լուսով ցաւալի երևոյթի ոչ միայն բարձունքը, այլ և այն հողը, որի վրա նա աճել է: Հասարակական երևոյթը (որպիսին հանդիսանում է միշտ ոճրագործութիւնը) ուրիշ կերպ լուսաբանելը կը լինի արուեստական լուսաբանութիւն և միայն այդ ժամանակ, յիրաւի, կարող է խօսք լինել պրէսպէկտիվի մասին: Վերցնենք ներկայ գործը. արուեստական կերպով, կամ քիչ լուսաբանելով, նա մեզ թուում է միայն, իբրև մի ֆանտաստիական, ցօմանային, մինչև անգամ անհաւատալի դէպք: Գրիգոր Գուգուլեանի արիւնալի, անակնկալ, արագ, յանդուգն ոճրագործութիւնը, իբրև մի կայծակ բացարձակ խաւարի մէջ, վառ կերպով լուսաւորում է մեր առաջ միայն մի անյայտ մարդու փոքր, աննշան դէմքը: Բայց միթէ այդ վայրկեանական լուսաւորութեան ժամանակ մենք ուրիշ ոչինչ չը նկատեցինք: Մթթէ մենք չը տեսանք, որ այդ մարդկային դէմքը կանգնած է մի անդնդի վրա, որ փորվել է դարերով, մի գրեթէ անյատակ անդունդի վրա:... Մթթէ այդ չը պէտք է դրաւի մեր ուշադրութիւնը: Մթթէ մենք կարող ենք անցնել պատահական բնաւորութիւն ունեցող երևոյթի մօտով, չը բացատրելով մեզ նոյն իսկ նրա նշանակութիւնը, չը փորձելով նոյն իսկ հասկանալ այդ երևոյթը, իբրև մի առանձին օղակ մարդկային տանջանքների այն ընդհանուր շղթայի մէջ, որ պատմութիւնը դիպլոմատիաբար և կարճ կերպով անուանում է «Հայերի դրութիւնը Թիւրքիայում»: Մենք, քրիստոնեայ հայ և Թիւրքահպատակ Գրիգոր Գուգուլեանի հետ միասին, այն անձի հետ, որ մեղադրվում է մուսուլման, Փոքր-Ասիայի ընական Թիւրք, Միմի օղլի Հասանի սպանութեան մէջ, կանգնած ենք պատմական անդունդի ծայրին և չենք կարող չը նայել այդ անդունդի մէջ:

Նախագահողը: Խնդրում եմ ձեզ չը շշափել այնպիսի հարցեր, որոնք դատաստանական քննութեան առարկայ չեն եղել:

(Կը շարունակվի)

Ց. ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՀՌՉԱԿԱՒՈՐ ՆԿԱՐՆԵՐԸ

(Նամակ Թէոդոսիայից)

«Սև ծովի հրամանատարը», ինչպէս անուանել էր հռչակաւոր Այվազովսկուն մի ռուս լրագիր, չը նայելով զառամեալ հասակին, շարունակում է նկարել իր սիրած տարերը՝ ծովը ու փոթորիկը: Ծովը իր փոթորկով նրա իդէալն է՝ նոյն իսկ ծերութեան հասակում:

Ներկայ 1899 թուին նկարել է աւելի քան 20 մեծ և փոքր նկարներ, որոնցից աւելի աչքի ընկնողների հետ ուզում եմ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին:

Առաջինը, որ կապ ունի հայոց կեանքի հետ և մարմնացնում է պատմական մի դէպքի, է «Բայրընի Մխիթարեաններին տուած այցելութեան» պատկերը: Նկարի մի կողմը երևում է Վենետիկը իր անհամար առագաստանաւերով և գօնդոլներով: Նաւերից մի քանիսը բարձրացրել են առագաստը՝ ճանապարհ են ընկնում. միւս կողմը երևում են Մխիթարեանները նաւահանգստի վրա, որոնք առաջ են եկել դիմաւորելու՝ արդէն ափը հասած մեծ բանաստեղծին—Բայրընին: Բայրընը, իջնելով ափ, բաղկացած ողջունում է միաբանութեանը, որը, ի պատիւ բանաստեղծի, առաջուց զորգեր է փռել նրա անցնելու ճանապարհի վրա: Ափից ոչ հեռու կանգնած է մի ուրիշ գօնդոլ, որի մէջ մի քանի իտալացի կանայք և տղամարդիկ առանձին հետաքրքրութեամբ դիտում են ընդունելութիւնը:

Ծովը խաղաղ է. ամպերը անդրադարձել են ծովի մէջ: Միաբանների դէմքերից միայն երկուսն է տիպիկական: Միւս դէմքերը անանցող են, ինչպէս խոստովանվում է ինքը նկարիչը: Պէտք է ասել, որ Բայրընի դէմքի արտայայտութիւնը չէ համապատասխանում՝ ողջունելու ժամանակ բռնած դիրքին: Ընդհանուր առմամբ պատկերը թողնում է տպաւորութիւն, ժամանակ հեռուից:

Միւս մեծ նկարը պատկերացնում է աստիճանաբար սաստկացող փոթորկի նշանները: Ծովը փոքր առ փոքր ալեկոծվում է: Երկնային փարոսը, լուսինը ձգել է իր միապաղաղ լոյսը հեղհեղ բարձրացող ալիքների վրա. ծովի ափին ընկած է նախկին փոթորկի զոհ առագաստանաւի կայմը: Վրձինը չէ մոռացել նոյն վայրկեանին անցած նաւի թողած հետքերը ներկելով. որքան նմանութիւն... Աւելի մեծ նկարը, որ դարձեալ փոթորկալի ծով է պատկերացնում, սարսուռ է ազդում. փոթորկի սարսափելի վայրկեանին անցնող շոգենաւը ծանծաղուտի հանդիպելով՝ ընկղմվում է կիսով չափ. վիթխարի ալիքները տատանում են այս և այն կողմ՝ ճանապարհորդներով լի փրկարար նաւակը, որտեղ կանգնածները յուսահատութիւնից մեծ նաւից կախված չուաններից բռնելով՝ օգնութիւն են սպասում: Թնութիւնն այստեղ կատակ չէ անում, նա մահ է սպառնում: Սարսափելի է բոպէն: Այս նկարը ծերունու վերջին գործն է:

Միւս պատկերներից յետ չէ մնում նաև մի ուրիշ նկար: Այստեղ փոթորկի քամահաճոյքին ենթարկվածը տաճիկների, իրանց նման ողորմելի նաւակն է: Նաւաստիները ֆէսերը գլխին, այս կեանքի և մահու կռուի վայրկեանին, իջեցնում են առագաստը, յուսով, որ գոնէ մի քանի վայրկեան դիմադրելուց յետոյ չը կորչեն ջրերի անհունութագաւորութեան մէջ. բայց իզուր. երկնքից կախված մթին ամպերը մահ են սպառնում նաւակին և նաւորդներին, որոնք ահ ու սարսափով սպասում են ճակատագրի անօրէնութեանը... Հեռու հորիզոնում ծովը հանդիստ է, վիթխարի շոգենաւը անհոգ ու անփոյթ կերպով կտրում է ծովի սիրտը: Նկարը՝ մի և նոյն վայրկենին, բնութեան երկու, փոթորկալի և հանդիստ երեւոյթներն է պատկերացնում:

Բաւական են այսքան փոթորիկներն ու սարսափելի տեսարանները, մտածում է դիտողը: Չը կա՞ ոչ մի օր սիրտ հանգստացնող մի նկար, որ փարատէ յուզմունքը. անցնենք միւս կողմը: Եւ ահա, փոթորիկներից ու նաւաբեկութիւններից յետոյ ձեր առջև բացվում է մի այլ տեսարան: Ահա վերջապէս մի նկար, որ թեթևացնում է ձեր սրտից կախված ծանրութիւնը: Այստեղ չը կան սրտաճմլիկ տեսարաններ, կործանվող նաւեր, յուսահատ դէմքեր... Ծովը ծիծաղում է և յոյս է տալիս. ահա և ափը, որին դիմում է անցնող շոգենաւը: Արևն էլ արդէն ձգել է իր վերջին ոսկեգոյն շողերը՝ ապակի ծովը: Այս և այն կողմն են թռչում թևահարելով ազատ ուրուրները: Խաղաղ ու անդորր է ծովը, ամեն տեղ յոյս ու խինդ է:

Հիանալուց ու սարսելուց յետոյ, այժմ դիտողը հիանում է, բայց չէ սարսում. նա զայրվում է և հանգստանում հոգեպէս՝ տեսնելով ընութեան բարկութեան հետ, նրա խաղաղ և վսեմ երևոյթները...

Ս. Խանոյեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 9-ին

Բագուն այժմ մեծ ճգնաժամի մէջ է, մեծ ճգնաժամ դրամի: Ամեն կողմից լսվում են յուսահատական ձայներ—փող չը կայ: Այնպիսի յայտնի ֆիրմաներ, որոնց համար տասնեակ հազարները ոչինչ չէին համարվում՝ այժմ վճարելիք հաշիւները ամիսներով են պահում, կամ առաջարկում են մուրհակ: Շատերի ասելով, Բագուի դրամական ներկայ անելանելի ճգնաժամը արդասիք է օտարների մեր առևտրի մէջ խառնվելուն, որովհետև նրանք ոչինչ կապ չեն ստեղծում առևտրականների հետ, ապրում են բոլորովին կղզիացած և ստացած դուժարները անմիջապէս փոխադրում են արտասահմանի իրանց վարչութիւններին: Ասում են մինչև անգամ, որ ծառայողների ամսական ռոճիկը այնտեղից է ուղարկվում: Սրանից յետոյ ինչպէս կարող է առևտրը առաջ ընթանալ, քանի որ առևտրի հոգին—փողը՝ հետզհետէ քչանում է, փոխադրվելով արտասահման: Առաջ փողը մնում էր մեր վաճառականների ձեռքին, որոնք պահեստ էին դնում բանկերում և պէտք եղած ժամանակ օգնում կարօտողներին: Օտարները եկուորներ են՝ նրանք հարստահարում—քամում են երկիրը յօգուտ իրանց և անհետ հեռանում են, աւերակները թողնելով մեզ: Մի խօսքով, ինչպէս տեսնում ենք, օտար կապիտալը մեզ համար օգուտ չէ բերում, բացի վնասից, որովհետև օգուտը գնում մնում է օտար երկրում: Օտար ֆիրմաների մէջ միմիայն Նոբէլի ֆիրման կարելի է համարել օգտակար, որովհետև նրա ամբողջ օգուտը մնում է մայր երկրի մէջ և ոչ թէ դրսի երկրում: Նորեկ զանազան անգլիական կամ ֆրանսիական ֆիրմաները կատարելապէս առաջացնում են սարսափելի դրամական ճգնաժամ, որի արդասիքը ահա այժմ տեսնում ենք և դժուար չէ դուշակել թէ ինչ կը լինի ապագան:

Ի՞նչ է պատճառը կամ ինչով բացատրել, որ անցեալ աարիները բանկերը իրանք էին խնդրում մուրհակ ներկայացնելու՝ զեղչելու համար և զեղչի %-ը իջեցնում մինիմումի, իսկ այժմ լսել անգամ չեն ուզում ու չեն մտնում քո դրութեան մէջ զեղչելու մուրհակդ բարձրացրած %%-ներով: Ի՞նչ է սրա պատճառը, ուր գնացին փողերը: Հակառակ ներկայ նաւթային առևտրի դրութեան, Բագուի մէջ փողը պէտք է շատ լինի, որովհետև սև նաւթի պուդը ծախվում է 15—16 կոպէկ, իսկ սպիտակը 30—31 կոպէկ և բացի այդ արդիւնաբերութիւնը աւելացել է: Զար լեզուները ասում են, թէ նաւթի այժմեան բարձր գինը պատճառ է օտարների գալուն, որովհետև սրանք նրա գինը բարձր են պահում: Այդպիսիներին կարելի է պատասխանել՝ թէ նաւթը վաղուց դարձել է համաշխարհային շուկայի ապրանք, առանց նրանց գալու էլ նա միշտ բարձր կը լինէր, որովհետև պահանջը շատ է: Նրանք միմիայն իրանց բերած մի քանի միլիոններով մեզ խաբեցին և այժմ օգտվում են մեր առատ վարձատրող խոշոր արդիւնաբերութեամբ: Նրանք գնեցին նաւթի լաւ հորեր ու հողեր, պատրաստի գործ, որը նրանց անագին օգուտ է տալիս, իսկ մեզ վնաս, որովհետև մեր կապիտալները գործ դրինք խաւանփորձ հողի վրա, անագին վնասներ կրելով.—Բողբոջան մեզ ապացոյց, որտեղ անյայտացան միմիայն հայերի միլիոնները, որը և նպաստեց այժմեան դրամական զարհուրելի ճգնաժամին:

Պ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 9-ին

Ամսիս 3-ին տեղի ունեցաւ Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր առաջարկվեց անդամներին ընկերութեան նոր կանոնադրութեան ծրագիրը՝ համաձայն խորհրդի 11 սեպտեմբերի պաշտօնական դրութեան: Ժողովը, միաձայն ընդունելով նոր ծրագիրը, կարգադրեց անյապաղ կազմել Շուշու հայոց Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը՝ համաձայն առաջարկված ծրագրի, և ուղարկել ուր հարկն է՝ հաստատութեան համար, և ապա շարունակել ըստ այնմ գործել:

Ամսիս 7-ին էլ նոյն ժողովի շարունակութիւնն էր, մի և նոյն ժամանակ ընկերութեան վերջին ընդհանուր ժողովը, ուր քննվեց ընկերութեան ունեցած գոյքերի լիկվիդացիայի խնդիրը:

Ընկերութիւնը իր գոյքերի վերաբերմամբ արեց հետևեալ որոշումները: Գրադարանն ամբողջապէս, որը բաղկացած է 1806 հատոր հայերէն և 3313 հատոր ռուսերէն գրքերից, որոնց ընդհանուր արժէքն է 7060 ռուբլի 15 կոպ., նոյնպէս և գրադարան-ընթերցարանի կահկարասիքը՝ մօտաւորապէս 600 ռուբլու արժողութեամբ, նուիրել Շուշու քաղաքային ինքնավարութեան այն պայմանով, որ վերջինս ոչ միայն համաձայն է ընդունելու, այլ և աշխատէ անպատճառ իրաւունք ձեռք բերել քաղաքումս իր անունով հասարակական գրադարան-ընթերցարան ունենալու: Դրա համար քաղաքին ժամանակավիճակ է տրվում 6 տարի: Իսկ եթէ այդքան ժամանակի ընթացքում քաղաքային ինքնավարութիւնը չը կարողացաւ գրադարան-ընթերցարան բաց անել, այն ժամանակ գրադարանը իր ունեցած կահկարասիքով անցնում է Շուշու թեմական դպրոցի վարչութեան ձեռքը և դառնում նրա սեփականութիւնը: Բայց մինչև որ քաղաքային ինքնավարութիւնը կուզենայ գրադարան բաց անել և կը ստանայ հարկաւոր իրաւունքը, գրադարանը իր կահկարասիքով տրվում է ի պահեստ թեմական դպրոցին և իրաւունք է տրվում նոյն դպրոցի աշակերտներին օգտվել ընկերութեան գրադարանից:

Ցատուկ գումարների մասին եղան հետևեալ որոշումները: Ընկերութեան ունեցած 2500 ռուբլի յատուկ գումարը, որից 2200 ռուբլին նուէր է զանազան մարդկանցից՝ այդ գումարի տոկոսիքով տառապեալներին օգնելու, իսկ 300 ռուբլին ընկերութեան միջոցներիցն է աւելացրած՝ նոյն նպատակով, որոշվեց այսպէս անել. 300 ռուբլին յանձնել ընկերութեան վարչութեանը ծախսելու, որովհետև վերջինս այդ ժողովում 300 ռուբլու պահանջ էր յայտնում իր այս տարվայ դէֆիցիտը ծածկելու համար, իսկ մնացած 2200 ռ. թողնել նոր ընկերութեանը իբրև յատուկ գումար, տոկոսիքը որոշած նպատակին գործադրելու իրաւունքով: Ընկերութիւնը մի քանի երիտասարդներից ստացած ունի և մի յատուկ գումար—137 ռուբլի 18 կոպ., ժողովրդական գրքոյկների հրատարակութեան համար: Որոշվեց այդ գումարն ուղարկել Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեանը:

Կահկարասիքի վերաբերմամբ արվեց այս որոշումը: Կահկարասիքի մի փոքր մասը թողնել նոր ընկերութեանը, իսկ մնացած մասը կցել գրադարանի հետ: Ժողովը իր միջից հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրելով, յանձնարարեց սրան վարչութեան անդամների հետ միասին կատարել վերոյիշեալ որոշումները պահանջող գրագրութիւնները և մի և նոյն ժամանակ ստուգել ու փակել նախկին ընկերութեան բոլոր հաշիւները:

Գրադարան-ընթերցարանի վերաբերմամբ արված ընկերութեան առաջին որոշումը, այն է գրադարանն ամբողջապէս քաղաքին նուիրելը, աւելի նպատակայարմար և ուրախալի գործ կարելի է համարել և ահա թէ ինչու: Քաղաքը իր մէջ ունենալով այնպիսի փոքր ի շատէ հարուստ գրադարան, որպիսին ընկերութեան գրադարանն է, և ինքնավարութիւնն էլ շարունակ հոգ տանելով այդ գրադարանի բարգաւաճման վրա, դրանով թէ նպաստած կը լինի քաղաքիս բոլոր ազգաբնակութեան մէջ աւելի և աւելի ընթերցանութեան սէր տարածելուն և թէ՝ բարեգործական ընկերութեան գրադարան-ընթերցարանի 11-ամեայ գործունէութեան ընթացքում նուաճած ընթերցողների մի հատուկ շրջանը այլ ևս զուրկ չի մնայ իր մտաւոր պաշարը հարստացնելու միջոցից:

Չենք կասկածում, որ մեր քաղաքային ինքնավարութեան ոչ միայն հայ իրաւասուները, այլ և՝ թուրքերը նոյնպէս կը հասկանան գրադարան-ընթերցարանի նման մի գեղեցիկ և լուսաւոր հիմնարկութեան քաղաքումս ունենալու վսեմ նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը, ու հեռացնելով մէջտեղ եկած այն հաճելի խոչնդոտը,—որ ինքնավարութիւնը գրադարան-ընթերցարանի գոյութիւնը պահպանելու համար

տարեկան ընդամենը 500—600 ռուբլի դէֆիցիտ պիտի ունենայ, որ և հաւեստաբար, մի շատ աննշան գումար է,—սիրով կընդունեն գովելի առաջարկութիւնը և կը շտապեն քաղաքային գրադարան-ընթերցարան ունենալու գործը անպատճառ գլուխ բերելու։ Թ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Վերջին օրերս, հոկտեմբերի 4-ին իմ գրականական աշխատութեան քան և հինգամեակի լրանալու առիթով, ես ստացայ Մոսկվայից և Ռուսաստանի զանազան ծայրերից նշանաւոր քանակութեամբ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ։ Զուսնենալով, դժբաղդաբար, հնարաւորութիւն պատասխանել իւրաքանչիւրին առանձին, թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով երկու խօսք ասել այն անձանց և հիմնարկութիւններին, որոնք պատուել են ինձ իրանց ուշադրութեամբ։

Ես հեռու եմ բառացի կերպով հասկանալու ժաքից և «ատորագրվելու՝ թէ ստացայ» այն չափազանցրած գովասանքները, դրուատական գնահատութիւնները, որոնք սովորական են և մինչև անգամ, հաւարձակվում եմ ասել, ներելի են նոյնանման դէպքերում։ Ցօբելեարներին, ինձ թւում է, աւելի ևս քան հանգուցեալներին, սազում է aut bene, aut nihil կանոնը։ Եւ ապա, ճշմարիտ որ, վատ չէ այդ սովորութիւնը, երբ 25 տարին մի անգամ մարդուն հնարաւորութիւն է տրվում մի քանի վայրկեան վայելելու այն իլլիւզիան, թէ նա իր ոյժերի չափ կատարել է իր հասարակական պարտքը։ Սրտանց շնորհակալութիւն եմ յայտնում ինձ շնորհաւորողներին, որոնք ինձ հնարաւորութիւն տուին առժամանակ ենթարկվել այդ քաղցր, բայց «մեղ բարձրացնող խաբէութեան» կամ աւելի ճիշդը, ինքնախաբէութեան։

Ցատկապէս ես պէտք է յիշեմ այն ջերմ շնորհաւորութիւնները, որ ես ստացայ որպէս «Եղբայրական օգնութիւն Թիւրքիայում վնասված հայերին» խմբագիր և մասնաւորապէս Թիւրքահայ այն գաղթականներից, որոնք ժամանակաւոր հանգիստ են գտել Ռուսաստանում Թիւրքաց սաբսափելի կոտորածից յետոյ։

Ըստ պարտաւորութեան և պատի և համաձայն suum cuique կանոնի, ես ինձ համար ախորժելի պարտաւորութիւն եմ համարում այդ խորազդած շնորհաւորութիւնները յատկացնել ըստ պատկանելոյն՝ առաջ ինտելիգենցիային և այն բոլոր բարի մարդկանց, որոնք արձագանք տուին բազմաչարչար հայերի անչափ թշուառութիւններին։ Ռուսաց հրապարակախօսների, դիտնականների, գրագէտների աշխատութեամբ և լուսաւոր համակրութեամբ երես երեսի յեսեից ստեղծվում էր, ոչ առանց նշանաւոր արգելքների, այն ընդարձակ դրականական նիւթը, որ կազմեց «Եղբայրական օգնութեան» 1000 երեսից բաղկացած անագին հատորը, լոյս սփռելով հայերի դրութեան վրա։ Բարեբաղդաբար, գտնվեցին բաւականաչափ անկողմնապահ և բարի մարդիկ, որոնք չը նայելով հայերի վերաբերմամբ տգիտութիւնից և չարութիւնից առաւելութեամբ տարածված չարակամ մեղադրանքներին, օգնութեան ձեռք կարկառեցին այն 50,000 որբերին, որոնց թողել էին նահատակները քրիստոնէական կրօնին հաւատարիմ մնալու համար։

Այդ կամաւոր տուրքերից հաւաքվեց մի գումար, թէպէտև չնչին, թշուառութեան անսահման չափերի հետ համեմատած, բայց ինքն ըստ ինքեան բաւական մեծ (ընդհանուր գումարը հասաւ 66,870 ր. 26 կոպէկի, զուտ արդիւնք—53,175 ր. 95 կոպէկի), գոնէ ժամանակի թեթևացնելու անօրինակ չարագործութիւնների զոհերի թշուառութիւնները։ Ահա յատկապէս նրանց, «Եղբայրական օգնութեան» այդ բարի մասնակիցներին, որոնք իրանց աշխատութեամբ և նուիրատուութիւններով նպաստեցին նրա նպատակին (35,000 ր. ուղարկվեց Կ. Պոլսի ռուսաց դեսպանութեանը եօթը հայ-ռուսական ապաստարաններ հիմնելու համար և 15,840 ր. սովածներին կերակրելու համար) պէտք է ուղղել երախտագիտութեան այն ջերմ արտայայտութիւնները, որոնցով լիքն են Թիւրքահայերից ստացված շնորհաւորութիւնները։ «Մեր հայեացքները և մեր աւերված հայրենիքում թողած մեր հարազատ եղբայրների և քոյրերի յոյսերը,—գրում են Կրիմում ապաստան գտած գաղթականները,—դարձրած են դէպի հիւսիս. ձեզանից և ձեր մեծահոգի և մարդասէր ինտելիգենտ աշխատակիցներից, բարեսիրտ Ռուսաստանի ռուս եղբայրներից ենք սպասում անկեղծ եղբայրական օգնութիւն. չէ որ միայն զօրեղ Ռուսաստանի ձեռքի շարժումի շնորհով մեր դժբաղդ հայրենիքում հաստատվեց արտաքին խաղաղութիւնը և հանգստութիւնը... Բայց եթէ մեր անտանելի դրութիւնը էլի շարունակվի, հայ ազգաբնակութիւնը կորստի է մատնվելու»։

Ի վերջոյ պարտաւորութիւնս եմ համարում ջերմ շնորհակալութիւն մատուցանել այն շնորհաւորողներին, որոնք բարեհաճեցին իմ գրականական տարեդարձի առիթով ուղարկել աւել կամ պակաս նշանաւոր նուիրատուութիւններ յօգուտ այն որբերի, որոնք խնամվում են «Եղբայրական օգնութեան» հայ-ռուսական ապաստարաններում Թիւրքիայում, և նրանով կրկնակի ուրախալի դարձնել իմ համեստ տօնախմբութեան յիշատակը։

Խոնարհաբար խնդրում եմ այն հրատարակութիւններին, որոնք համակրում են «Եղբայրական օգնութեան» նպատակներին, չը մերժել արտատպելու իմ այս յայտարարութիւնը։

Գր. Զանչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, հոկտեմբերի 12-ին, ցերեկվայ ժամի 1½-ին, Թիֆլիսի զինուորական թանգարանում բացվեց գիւղատնտեսական դպրոցների գործունէութեան ցուցահանդէսը։ Արդիւնքները տեղաւորված էին թէ թանգարանում և թէ Ալէքսանդրեան այգու այն մասում, որ կպած է թանգարանին։ Բացման ներկայ էին՝ կովկասեան կառավարչապետ իշխան Գ. Գոլիցին, կառավարչապետի օգնական Ա. Ֆրեզէ, երկրագործութեան մինիստրի լիազօր Մեդվեդեվ, կառավարչապետի խորհրդի անդամ Սուլտան Գրիմ-Գիրէյ, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Կ. Եանովսկի, գիւղատնտեսութեան տեսուչ Վ. Դէլեվսկի, մամուլի ներկայացուցիչները, ազգօգուտներ և բազմաթիւ հիւրեր։ Ցուցահանդէսի մասին տեղեկութիւններ կը հաղորդենք մի ուրիշ անգամ։

—

Երէկ երեկոյեան Երևանից ստացանք հետևեալ հեռագիրը. «Արաքսի» խմբագիր-հրատարակիչ Սիմէօն Գուլամիրեանց վախճանվեց»։

—

Կովկասեան թէյը դարձրել է իր վրա գիտնական ընկերութիւնների ուշադրութիւնը։ Կովկասեան թէյը աւելի մօտ է Ցէյլոն կղզու թէյին, որովհետև մշակվում է այդ կղզում ընդունված եղանակով։ Պրոֆէսօր Վ. Ցիխօմիրով իր զեկուցման մէջ, որ կարդացել է Մոսկվայի բնագիտական ընկերութեան մէջ ներկայ հոկտեմբերի 3-ին, յայտնում է, որ կովկասեան թէյը շատ լաւ յատկութիւն ունի, լաւ պատրաստվում է, բայց թանդ է նստում. չինացի բանւորներ բերելը ծախք է պահանջում, իսկ տեղական կովկասեան բանւորները թէ անփորձ են թէյի մշակութեան համար և թէ համեմատաբար թանդ են։ Անկասկած, չինական ձևով պատրաստած թէյը աւելի հոտաւէտ և համեղ կը լինէր. բայց Ցէյլոն կղզում ընդունված ձևը աւելի հեշտ է և էժան։ Կովկասեան թէյը եթէ չի հասնի չինականին, նա կարող է աջողութեամբ փոխարինել Ցէյլոնի թէյին։

—

Թիֆլիսի դումայի վերջին նիստում, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 11-ին, քաղաքագլուխ Գ. Եանդուլով յայտնեց, որ երկրագործութեան մինիստր Երմոլով, լսելով քաղաքի կողմից խնդիրը երկրագործական դպրոց հիմնելու մասին Թիֆլիսում, յայտնեց իր համակրութիւնը այդպիսի դպրոց հիմնելու գաղափարին։ Նոյն նիստում որոշվեց յատկացնել 10,000 ռուբլի առաջիկայ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներում փողոցներ սալայատակելու համար. այդ գումարից 3000 ռուբլի պէտք է ծախսվի այն փողոցների սալայատակման վրա, որի ծախքի կէսը վերցնում են իրանց վրա տանտէրերը։

—

Թիֆլիսում նորերս վախճանված այրի Մարիամ Գրիգորեան Դաւթեանց, ծննդեամբ Շիրազանց, իր կենդանութեան ժամանակ արել է հետևեալ նուիրատուութիւնները, որոնց կատարումը յանձնել է իր մօրը. Էջմիածնի Գէորգեան ճեմարանին 2000 ր. այն պայմանով, որ գումարը բաւականաչափ աճելուց յետոյ, նրա տոկոսով մի որդեգիր պանվի նոյն հաստատութեան մէջ մշտապէս Թիֆլիսի հայ չքաւոր ընտանիքներից, հանգուցեալի անունով։ Ներսիսեան դպրանոցին 500 ր., որի տոկոսը պէտք է գործածվի ուսումնարանի չքաւոր աշակերտների հագուստի և ոտնամանների վրա։ Կոյրերի ուսումնարանին Թիֆլիսում 300 ր., Թիֆլիսի հայ կանանց Բարեգործական ընկերութեան՝ 300 ր., Թիֆլիսի կուսանաց անապատին 200 ր., Թիֆլիսի հայ քահանաների ապահովութեան գանձարանին 200 ր., Սօլոլակի ճաշարանին 100 ռուբլի։

—

Միջազգային իրաւունքի պրոֆէսօր Մարտէնս, վերադառնալով արտասահմանից Պետերբուրգ և սկսելով իր պարապմունքները հաւալսարանում, նուիրել է իր առաջին դասախօսութիւնը Հաագայի կոնֆէրէնցիային։ Լսարանը ընդունել է պրոֆէսօրին բուռն ծափահարութիւններով։ Մարտէնս, բնորոշելով կոնֆէրէնցիան, յայտնեց, որ նա նման էր մի միջազգային պարլամենտի, որտեղ խօսվում էին երկար ճառեր և տեղի էին ունենում տեսական վիճաբանութիւններ։ Կոնֆէրէնցիային մասնակցել են 105 ներկայացուցիչ 24 երկրից։ Մասնակցողները նստած էին այբուբենական կարգով և ունէին հաւասար իրաւունքներ։

—

ՔՈՒԹԱԻՍԻՑ մեզ գրում են. «Այս օրերս փակվեց Քութայիսի գիւղատնտեսական ցուցահանդէսը։ Ցանկութիւն կայ եկող տարի ևս ցուցահանդէս կազմել աւելի չքեղ և հարուստ ծրագրով մի և նոյն տեղում։ Հայերից երեք էկսպօնենտ արժանացան պարգևների. Հ. Ս. Մամաջանեան՝ իր նոր հնարած կասելու մեքենայի համար ստացաւ արծաթի մեդալ, Մ. Ա. Անանեան՝ ագնիւ ցեղի կենդանիներ բազմացնելու համար՝ գովասանական թերթ, իսկ օր Սոֆիա Գ. Միրիանեանը՝ «Ոգի Հայաստանի» ձեռագործ նկարի համար՝ գովասանական թերթ։ Մինիստր պ. Երմոլովը հաւանեց պ. Մամաջանեանի հնարած մեքենան և խոստացաւ օգնել տարածելու նրան։ Գ. Մամաջանեանը արդէն երկու տարի է, որ պատշաճաւոր տեղից արտօնութիւն է ստացել այդ մեքենայի համար։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է, Ղզըլ-Քիլիսա գիւղի բնակիչ Սանդաձէները՝ «Մշակի» ընթերցողներին յայտնի՝ իրանց քաջագործութիւնները կատարում են սովորաբար Ախալքալաքի գաւառում, Բօրչալուի գաւառի գլխաւորապէս Ծալկա բաժնում և Գօրու գաւառի Ղզըլ-Քիլիսա և Մօլիթ գիւղերում։ Սակայն վերջին բռնութիւնը, սեպտեմբերի 14-ին, նրանք կատարել են Ախալցխայի գաւառում, Ասպինձայի ջերմուկում, որ մեր գաւառի սահմանի մօտ է գտնվում, և այս անգամ հերոս հանդիսանում է ինքը, Ալէքսի Սանդաձէն և ոչ որդիքը։ Այդ օրը ջերմուկում լողանալիս են լինում մեր գաւառի Ուճմանա գիւղացի Մկրտիչ Գապարեան և իր եղբայր Գրիգորը. այդ միջոցին մօտ է գալիս հանքային ջրերում Ալէքսի Սանդաձէ իր մի ծառայի հետ և սկսում է հայհոյել լողացող գիւղացիներին այն պատճառով, որ նրանք համարձակվում են լողանալ իր ներկայութեամբ։ Զը բաւականանալով հայհոյանքով՝ Ալէքսին և նրա հրամանով՝ ծառան փայտերով և պաղ զէնքով յարձակվում են մերկանդամ լողացողների վրա և սկսում են անխնայ ծեծել նրանց, մինչև որ մարմինները արիւնլուայ են դառնում, իսկ Գրիգորի աջ ձեռքը լուրջ վնասվում է։ Դրաման աւելի արիւնալի կը լինէր, եթէ էշտիացի Միքայէլ Գօզալեան չը բռնէր Ալէքսիի ծառայի ձեռքից այն բօպէին, երբ վերջինս ուզեցել է դաշոյնի հարուած հասցնել Մկրտչի փորին։ Ներկայ եղող վկաներից միայն դա է միջամտել, իսկ Ուճմանա և Թորիա գիւղի ներկայ եղող բնակիչներից ոչ ոք այդ միջոցին չէ համարձակվել մօտ գնալու։ Այդ դէպքին վերաբերեալ գրաւոր դոկումէնտը, որ այս բօպէիս գտնվում է իմ ձեռքում, ուրիշ մանրամասնութիւններ էլ է պատմում, որ առ այժմ աւելորդ եմ համարում առաջ բերել, յուսալով որ վերջապէս Սանդաձէները կը հասկանան, թէ ինչ բաներ են խիղճ, օրէնք, յանցանք, պատիժ, և այլ բաներ։—Մկրտիչ Գապարեան գանգատվել է ուր հարկն է»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ հաղորդում են հետևեալը. «Երկար երաշտութիւնից օդը ապականված է ու փոշիով լցված և այնպէս ծանրացել է, որ չնչելը ուղղակի անկարելի է լինում։ Տեղական ջերմը որ, կենցաղավարութեան բարեփոխութեան շնորհիւ, այս քանի տարիները համաբեռ վերացել էր, այս տարի նորից սկսվեց ևս առաւել սարսափելի կերպով։ Որ այդին որ մտնում ես, 1—2—3 հոգի ջերմով հիւանդ են. դեռ կան այնպիսի ընտանիքներ, որոնք ամբողջապէս հիւանդ են, խնամող անդամ չը կայ... Շատ անդամ հիւանդութիւնը անխնամութիւնից փոխվում է «տիֆի» և մի-մի զոհեր տանում։ Սրանով զգուշացնում ենք մեր հասարակութեան, որ աշխատեն որքան կարելի է լաւ խնամել հիւանդներին ու շուտով հիւանդութեան առաջն առնեն, հակառակ դէպքում ջերմից զանազան տեսակ վտանգաւոր հիւանդութիւններ առաջ կը գան, մանաւանդ՝ աշնան ժամանակ։ Թէև այժմ այստեղ գաւառական բժիշկ չը կայ, սակայն մի այնպիսի ազնիւ անձնաւորութիւն կայ, որ պիսին է տեղիս զինուորական բժիշկ Նաստավինը, որը ոչ օրի խնդիր չէ մերժում և շատ անգամ էլ ձրի դեղեր է տալիս չքաւորներին։ Ուրեմն օգտվենք նրա բարութիւնից, մեր խորին յարգանքն ու շնորհակալութիւնը մատուցանելով այդ գաղափարական մարդուն»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

11 հոկտեմբերի

ԿԱՊՇՏԱԴՏ։ Մեֆկինգից հեռագրում են, որ բօքսերները, անգլիական ոյժերի հետ ունեցած ընդհարումների ժամանակ, կորցրին 53 մարդ սպանված. կան շատ վիրաւորվածներ։

ՍԱՆՏՕՍ։ Երէկ, երեկոյեան, ժանտախտից մեռնելու մի դէպք կար։ Այն ժամանակվանից հիւանդանալու դեռ ոչ մի դէպք չէ եղել։

ԼՕՆԴՕՆ։ Գեներալ Ուայտի պաշտօնական հեռագիրը, Ելանդսլաագտէ գրաւելու մասին, ասում է. «Ներկայ կռիւը սկսվեց ժամի 3½-ին, կէս օրից յետոյ։ Բօքսերները գրաւել էին ամենաուժեղ դիրքը, ժայռոտ բլուրների վրա։ Մեր թնդանօթաձիգ զօրքը տեղաւորվել էր սարի ծայրին, թշնամուց 4000 եարդ հեռաւորութեան վրա, որ իսկոյն կրակ բացեց։ Բօքսերները թընդանօթներից լաւ էին արձակում, բայց փոքր ինչ բարձր. ռումբերը լաւ էին պայթում։ Թընդանօթային կռուից յետոյ, որ վերջացաւ բօքսերի թնդանօթների լռութեամբ, սկսվեց հետևակ զօրքի յարձակումն դէվոնշիրեան գնդի առաջնորդութեամբ։ Այն ժամանակ, երբ դեվոնշիրցիները և կօրդանցիները գործում էին ձախ կողմից, թնդանօթները թէև երբեմն-երբեմն լռում էին, բայց ամեն մի նպաստաւոր դէպքում կրակ էին անում։ Սաստիկ կռուից յետոյ հետևակ զօրքը, երեկոյեան ժամի 6½-ին, գրաւեց թշնամու դիրքը։ Թշնամին պաշտպանվում էր մեծ արիութեամբ մինչև վերջին վայրկեանը. մեր հեծելազօրքը երեք անգամ յարձակում գործեց մեծ աջողութեամբ նահանջող բօքսերների վրա. երկու թնդանօթ և ամբողջ քանակը գրաւված են։ Բօքսերների կորուստը նշանաւոր է։ Բօքսերների գրաւած երկաթուղային գնացքը՝ ինը անգլիական դերիներով, յետ է առնված։ Մեր կողմից սպանված են և վիրաւորված 160 մարդ։

ԳԼԷՆԿԷ։ Ժամը 2-ին, կէսօրից յետոյ, սկսվեց սաստիկ կռիւ բանակի հիւսիս-արևմտեան կողմից։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Ելանդսլաագտէի կռուի ժամանակ բօքսերը նշանաւոր կորուստ ունեցան։ Անգլիացիների կորուստը հասնում է 100 հոգու։ Գերի են բռնված մի քանի բօքսերներ, որոնց թըւում մի զօրապետ—Կուկ, որ վիրաւորված է և Ժուքեր, զօրապետի եղբօր որդին։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Գլէնկէից եկած հեռագիրը հաղորդում է, որ Ժուքերի զօրքը յարձակվում է այժմ անգլիացիների ամրոցների վրա։

ԼՕՆԴՕՆ։ Թագուհին, զինուորական մինիստրին ուղղած հեռագրի մէջ, ասում է, որ իր սրտից արիւն է կաթում, երբ մտածում է այդքան ծանր կորուստների մասին։ Այսօր ևս մեծ աջողութիւն է ձեռք բերվել, բայց, ինչպէս ինքն երկիւղ է կրում, դարձեալ շատ թանդ դնով։ Ապա Թագուհին խնդրում է մինիստրին հաղորդել իր սրտագին համակրութիւնը սպանվածների ազգականներին, և արտայայտել նրանց իր անունից զարմացման զգացում դէպի նրանց քաջութիւնը։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Բօքսերների գեներալ Կուկ մեռաւ վէրքերից։ Ելանդսլաագտէի մօտ կռուող բօքսերների զօրքի թւում կային և հօլանդական, գերմանական և ուրիշ կամաւորների գնդեր։ Ելանդսլաագտէում գերի բռնվեց գերմանական կամաւորների հրամանատար գնդապետ Շիլ։

ՄՕՍԿՎԱ։ Գանգատ է յարուցված՝ Մամօնտովին առևտրական մնանկ ճանաչելու համար։ Մամօնտովի ամբողջ գոյքը ցուցակագրված է Մոսկվա-Արխանգելեան երկաթուղու պահանջով։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրում տպված է, որ բօքսերների ցոյց տուած բարձր յատկութիւնները պէտք է շատ նպաստեն Հարաւային Աֆրիկայի խաղաղացման, պատերազմի այդ վերջնական նպատակին։ Մենք պէտք է միանգամ ընդմիշտ ոչնչացնենք աֆրիկանդների ազդութեան ուրուականը։ Եթէ Անգլիան յետ կանգնի այդ նպատակը իրագործելուց, նա զարմանալի յիմարութիւն և մինչև անգամ յանցանք գործած կը լինի։

ԼՕՆԴՕՆ։ «Daily Mail» լրագրի թղթակիցը Լէդի-Սմիտից ուղարկած հեռագրի մէջ այսպէս է նկարագրում Ելանդսլաագտէի մօտ տեղի ունեցած կռիւը. հետևակ զօրքը երկու անգամ սուիններին դիմեց. ապա բրիտանական զօրքերը ստիպված էին մի բօպէ կանգ առնել, որովհետև բօքսերները դիմաւորեցին նրանց սաստիկ հրացանաձգութեամբ, բայց մի փոքր յետոյ, նրանք, «ուրայի» բարձրաձայն աղաղակներով կրկին յարձակվեցին թշնամիների վրա և կտրեցին բօքսերների գիծը, որոնք, իրանց յաղթված զգալով, սկսեցին յետ քաշվել, և ապա սպիտակ դրօշակ բարձրացրին և անձնատուր եղան։ Փախուստ տուող մի քանի հարիւր բօքսերներին ուղղանները ոտնահար արեցին։ Թղթակիցը աւելացնում է, որ բօքսերների կորուստը 400 մարդուց աւելի է։ Գերիների թիւմն է գտնվում և Յոհաննէսբուրգի կօմենդանտ Դէմպլիօն։

ԼՕՆԴՕՆ։ Երեկոյեան լրագիրներում տպված է հեռագիր Կապշտադտից, որի մէջ հաղորդվում է, որ անգլիացիները Գլենկէի մօտ երկրորդ կրակոց յաղթութիւնը տարան։ Լուրեր են պատում, որ բօէրները մեծ կորուստներ կրեցին, յետ քաշվեցին և յուսահատված են։ Ուրիշ լուրի համեմատ, Կրիւգէր խորհուրդ էր տալիս անպայման կերպով անձնատուր լինել։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Գապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

10—100

Մի ընտանիք,

որ գտնվում է կարօտութեան մէջ, խնդրում է օգնել իրան դրամական նպաստներով. հասցէն Նիկոլաեվսկայա փողոց, Շանչիեվի տուն, Պարոնակեանին։ 1—3

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝

Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյեան 5—7 ժամը։

Գանձակայա փողոց, տուն Մարգարով, № 31։

(Ե. Հ. Շ.) 75—100



Ամենակատարելագոյն ապրանք։ Ամենաէժան գինով։ Ամենամեծ վաճառքն ունի։ Ամենամեղմ ազդեցութիւն ունի մարդու մարմնի վրայ։ Ամենահամեղ կոնֆետ։ 2—50

ԲԱԳԻՈՒՄ

Բացված է ներկայ ուսումնական տարվայ սկզբից

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

ՅԱԿՈՎԲ Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆՑԻ

(Ներսիսեան դպրոցի նախկին հոգաբարձուի)

Ընկերակցութեամբ ուսուցիչ պ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆԻ

(քարտուղարի Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան)

Աշակերտներ ընդունվում են երթևեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ՝ 7 տարեկան հասակից։ Դպրոցի նպատակն է պատրաստել երեխաներին կլասիկական գիմնազիա և բէալական դպրոց մտնելու համար։ Ուսումը սկսված է սեպտեմբերի 6-ից։

Պայմաններն իմանալու համար դիմել ուսումնարան՝—Տէլէֆոնայա և Ստանիսլավսկայա փողոցների անկիւն, տուն Եղիազարովի։ 4—10



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Ռուսաց և արտասահմանեան ֆիրմաների։

ԲԻՒՐՕՆ ՑԱՆՁՆ Է ԱՌՆՈՒՄ

կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործատներ

ԳԱԶԱ-ՇՈԳԻԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրոտէխնիական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելը հեռաւորութեան վրա։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ինժեներ Ն. Բ. Պասսէկի

Тифлисъ, Михайловская ул. № 116.

Հասցէն հեռագիրների համար. Тифлисъ—Пассеку.

ՏԷԼԷՖՕՆ № 642.



ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԵՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄՔ

ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ

ամեն տեսակ

տիւրբինները, խողովակները, մեքենաները և ջրհանները։

ԿԱՌՈՒՑԱՆԵԼ

երկաթէ կամուրջներ

և տնակներ։

ՑԷՄԷՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

(Ե. Հ. Շ.) 48—100

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է, որ նախկին Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան գրադարան-ընթերցարանը փակված է և այդ պատճառով խնդրում է բաժանորդներին վերադարձնել իրանց մօտ եղած գրքերը և յետ ստանալ գրաւականները։ 3—3

Բժշկարար Կէֆիր եւ Կումիս

Օ. ԿՕՐՕՆԱ

Թոյլատրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցահանդէսներում, ընտիր կէֆիր և կումիս պատրաստելու համար։ Կարելի է ստանալ Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մէլիքեան փողոց, տուն Զուբալովի և բաժանմունքում, Միքայէլեան փողոց, օֆիցէրների տնտեսական ընկերութեան խանութին կից։

Ուսուցիչներին, սպասողներին և տնտեսական ընկ, անդամներին կը լինի զիջում։ Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայացնեն բժշկից առանձին դեղատոմս։

Ցանկացողներին՝ կէֆիր ու կումիս կարելի է տուն ուղարկել։ 12—50

М. 89509

ՄԵՔԵՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ, Հ. ԿԵԱՆՋՈՒՆՑԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱԳՈՒ

ՆՐԱ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԲԻԲԻ-ՀԵՅԲԱԹՈՒՄ

Սկսել է իր գործունէութիւնը,

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

ամեն սիստեմի մեքենաների և գործիքների, մասնաւորապէս հորեր փորելու և նաւթ քաշելու համար՝ շոդէկաթսաների, թորիչների, թուջէ զանազան ձուլուածքների՝ մինչև 1000 պուդ, զանազան պղնձէ ձուլուածքների և այլն և այլն։ Գործարանի պահեստում կարելի է գտնել միշտ Բագուի համար հարկաւոր գործիքներ։

Գործարանի Բիբի-Հէյբաթի բաժանմունքը լանձն է առնում հորեր փորել կապալով Բիբի Հէյբաթում։

Պատուէրների համար դիմել՝ քաղաքի գրասենեակը (Старо-Полицейская, տուն Արաֆելովի, տէլէֆոն № 749), գործարան. տէլէֆոն № 54, կամ Բիբի-Հէյբաթի բաժանմունքը՝ տէլէֆոն № 451. (Ե. Հ. Շ)

28—52 М. 35,967 (չ)

Կրթված եւ ինտելիգենտ հասարակութեան համար

Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Արաֆելովի, Կադետների կորպուսի հանդէպ։

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԴԵՌ ԵՒՍ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ

ԱՑՏԵԿՆԵՐԻ ՑԵՂԻՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԻՆԿԱՍ ՑԵՂԻ ՏՈՀՄԻՑ

Այդ ացտեկները ցոյց են տրված եղել մինչև անգամ Եւրոպայի ամենամեծ քաղաքներում—Բերլինում, Լօնդօնում, Պետերբուրգում, Մօսկվայում և Խարկովում, և գրաւել են գիտնականների ուշադրութիւնը։ Ացտեկները ներկայացրված են եղել բոլոր մարդաբանական ընկերութիւններին, յայտնի պրոֆէսորներ դոկտ. Ռուդ. Վիրխովին—Բերլինում, պրոֆէսոր Բանկէին—Մինխէնում, պրոֆ. դոկտոր Բուդինգերին—Հայդելբերգում, պրոֆ. Բրանդին—Խարկովում, որոնք առանձին հետաքրքրութեամբ զննեցին և շատ բան գրեցին նրանց մասին։

ԴԱՋՎԱԾ ԱՄԵՐԻԿՈՒՀԻ ՏԻԿԻՆ

ՄԻՍՍ ԷՄԷԼԻՆԱ,

որին «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ» են կոչում։

Միսս Էմէլինա իր մարմնի վրա 300-ից աւելի գեղարուեստական նկարներ ու գլխատառեր ունի, այդ բոլորը շինված են ԱՍՂՈՎ ԾԱԿԾԿԵԼՈՎ, որոնց թիւը հասնում է մինչև 3,000,000։ Ամբողջ դաջելը տևել է 2 տարի և արժէ 4000 ռուբլի։

Միսս Էմէլինա շատ հետաքրքիր է նկարիչների, պրոֆէսորների և առհասարակ ինտելիգենտ հասարակութեան համար։ Խօսում է ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն։

Դաջել է պրոֆէսոր Աուբելի Զիկագոյում։ Միսս Էմէլինա ներկայացրված է գեղարուեստական ճեմարաններին՝ Բերլինում, Պարիզում և Լօնդօնում։ Ստացել է նա ատոմեստատներ Բեկկեր, Մէնցել և ուրիշ պրոֆէսորներից։

ՀՍԿԱՅ Ամենամեծ մարդը աշխարհիս երեսին ԵՐԵԽԱՅ 16 տարեկան, բարձրութիւնը 3 արշին 6 վերշոկ։

Տեղերի գները 50 և 30 կոպէկ։ Երեխաները մինչև 14 տարեկան և զինուորները վճարում են կէսը։ Բաց է հասարակ օրերը առաւօտեան 10 ժամից, իսկ տօն և կիրակի օրերը՝ առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը։ 6—6

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Октября 1899 г.

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванкская ул., № 27.